Իրավաբանների հայկական ասոցիացիայի, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ի առաջարկությունները և դիտարկումները «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ սահմանադրական օրենքի վերաբերյալ

ՀՀ Ազգային ժողովի կայքէջում «Պաշտոնապես շրջանառության մեջ դրված, նստաշրջանի օրակարգում դեռևս չընդգրկված հարցեր» բաժնում հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենք նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)[1], որով, ի թիվս այլնի, նախատեսվում է ստեղծել Դատավոր ընդհանուր ժողովի երկու առանձին հանձնաժողով. Կարգապահական հարցերի հանձնաժողով և Էթիկայի և վարքագծի կանոնների հարցերով խորհրդատվական հանձնաժողով:

Առաջարկ 1.

Նախագծի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 14-րդ հոդվածը նախատեսում է. *«3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Ընդհանուր ժողովի հանձնաժողովների դատավոր չհանդիսացող այն անդամները, որոնք հանդիսանում են փաստաբան և ունեն գործողության մեջ գտնվող փաստաբանական գործունեության արտոնագիր, Ընդհանուր ժողովի համապատասխան հանձնաժողովի նախագահին են ներկայացնում իրենց փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցնելու մասին Փաստաբանների պալատի խորհրդի որոշումը: Ընդհանուր ժողովի համապատասխան հանձնաժողովի նախագահի կողմից գրավոր արձանագրվում է վերը նշված որոշումը ստանալու հանգամանքը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցնելու մասին Փաստաբանների պալատի խորհրդի որոշումը Ընդհանուր ժողովի համապատասխան հանձնաժողովի նախագահին չներկայացնելու դեպքում Ընդհանուր ժողովի հանձնաժողովների դատավոր չհանդիսացող անդամի լիազորությունները համարվում է դադարած օրենքի ուժով»:*

[1] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=72446

Ենթադրաբար սույն փոփոխության հիմք է հանդիսացել Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի ոչ դատավոր անդամների փաստաբան լինելու հանգամանքը, և հնարավոր է, որ փաստաբանական գործունեությունը խոչընդոտի Կարգապահական հանձնաժողովի ոչ դատավոր անդամի օբյեկտիվ գործունեությանը: Սակայն, միևնույն ժամանակ պետք է նշել, որ սրան զուգահեռ առկա է եղել պրակտիկա, երբ նախկին ոչ դատավոր անդամներից երկուսը եղել են փաստաբաններ, սակայն հայտնի չեն դեպքեր, երբ նրանց կողմից «ոչ դատավոր անդամի» և «փաստաբանի» կարգավիճակը նույնացվել է, և օգտագործվել է ինչպես փաստաբանական գործունեության, այնպես էլ ոչ դատավոր անդամ հանդես գալու ընթացքում: Փաստացի, ստացվում է մի իրավիճակ, երբ այս երկու կարգավիճակների նույնացումը կախված է լինում է միայն անձի բարեվարքությունից, և էթիկական վարքագծից: Կիսելով Արդարադատության նախարարության մտահոգությունները, սակայն ամբողջովին հիմնավորված չէ այս մոտեցումը՝ օրինակ այն փաստաբանների նկատմամբ, որոնք իրականացնում են այնպիսի փաստաբանական գործունեություն, որը չի ենթադրում դատական ներկայացուցչություն (օրինակ՝ ընկերության կորպորատիվ սպասարկում) կամ դատական ներկայացուցչություն իրականացնում են բավականին հազվադեպ: Հետևապես, նկատի ունենալով երկուստեք՝ և՛ նախարարության ու դատական իշխանության, և՛ փաստաբանների շրջանում առկա մտահոգությունները, որպես հավասարակշռված տարբերակ **առաջարկում ենք հետևյալ մոտեցումը**. կարգապահական հանձնաժողովի այն ոչ դատավոր անդամները, որոնք ունեն փաստաբանական գործունեության արտոնագիր, պարտավորվում են որպես փաստաբան իրականացնել դատական ներկայացուցչություն տարեկան 1-3 գործերով: Միևնույն ժամանակ, ոչ դատավոր անդամ ընտրվելու պարագայում փաստաբանը չպետք է զրկված լինի զբաղվել փաստաբանական գործունեությամբ, որը չի ենթադրում դատական ներկայացուցչություն:

Առաջարկ 2.

Նախագծի նույն՝ 14-րդ հոդվածում նախատեսված է հետևյալը. *«4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է Էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամին առաջադրող հիմնադրամներին ներկայացվող պահանջները, նրանց կողմից առաջադրվող թեկնածուների մրցույթի անցկացման եւ ընտրության անցկացման կարգն ու մանրամասները:»*: Չնայած այն հանգամանքին, որ Նախագծի 3-րդ հոդվածում նշված է՝ *«Օրենքի ողջ տեքստում «հասարակական կազմակերպություններ» բառերի և դրանց համապատասխան հոլովաձևերից հետո լրացնել « կամ հիմնադրամներ» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով»*, **առաջարկում ենք** Նախագծի 14-րդ հոդվածի 4-րդ մասում «հիմնադրամներին» բառից առաջ պետք է լրացնել «հասարակական կազմակերպություններին և» բառերը, քանի որ միայն նշելով «հիմնադրամներ» եզրույթը,

կարգավորումը թերի է լինում և հետագայում կիրառման ընթացքում հնարավոր է մեկնաբանման կարիք առաջացնի։

Առաջարկ 3.

Նախագծի նույն՝ 14-րդ հոդվածում նախատեսված է հետևյալը. *«4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամին առաջադրող հիմնադրամներին ներկայացվող պահանջները, նրանց կողմից առաջադրվող թեկնածուների մրցույթի անցկացման և ընտրության անցկացման կարգն ու մանրամասները։»*: Թեև ներկայացվող պահանջները մշակվելու և հաստատվելու է Բարձրագույն դատական խորհրդի կողմից, այդուհանդերձ, որպես **հիմնական չափանիշներ առաջարկում ենք նախատեսել ներքոթվարկյալները,** որոնք կապահովեն հանձնաժողովի արդյունավետությունը և անկախությունը՝ ոչ դատավոր անդամների մասով.

1. Նախատեսել հստակ չափանիշներ այն ՀԿ-ների և հիմնադրամների համար, որոնք առաջադրելու են թեկնածուներ։ Օրինակ՝ դատական, իրավական և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում առնվազն 5 տարվա գործունեության փորձ, որը հաստատվում է փաստաթղթերով կամ այլ միջոցներով։
2. ՀԿ-ների և հիմնադրամների կողմից առաջադրված թեկնածուները չպետք է առաջադրման և դրա նախորդող երկու տարիների ընթացքում ունենան փոխկապակցվածություն դատական իշխանության մարմինների հետ, այդ թվում նաև՝ լինեն դատական իշխանության կամ այդ ոլորտում գործունեություն ծավալող որևէ մարմնի (օրինակ՝ Արդարադատության ակադեմիա) աշխատող, ծառայող, փորձագետ։
3. Ոչ դատավոր անդամների թեկնածուները, որոնց առաջադրում են իրավասու ՀԿ-ները կամ հիմնադրամները, պետք է նախկինում ունենան հստակ համագործակցության փորձ այդ ՀԿ-ների և հիմնադրամների հետ։

Առաջարկ 4.

Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է հետևյալ փոփոխությունը. *«Օրենքի 77-րդ հոդվածի՝ 4-րդ մասում՝ ա) «ութ» բառը փոխարինել «տասնմեկ» բառով. (…)»։* Ինչպես գիտեք, դեռևս 2020 թվականից ԻՀԱ-ի և գործընկերների կողմից բարձրաձայնվում էր այն խնդիրը, որ էթիկայի և կարգապահական, ինչպես նաև Գնահատման հանձնաժողովներում ոչ դատավոր անդամների ներգրավվածությունը ցածր է, և դատավոր և ոչ դատավոր անդամների միջև

հավասարակշռությունը չի ապահովվում: Այս անհամաչափ մոտեցումը և դատավոր անդամների բացարձակ մեծամասնության գործոնը նպաստել են՝ օրինակ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովներում ոչ դատավոր անդամների անարդյունավետ աշխատանքին և նրանց մասնակցությունը դարձնել ձևական: Դեռևս 09.10.2017 թ.-ին ՀՀ դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ տրված կարծիքում[2] Վենետիկի հանձնաժողովը հայտնել էր նույն մտահոգությունները, ըստ որի Կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է բացառապես դատավորներից, ինչը կարող է առաջացնել կորպորատիվ մոտեցում որդեգրելու ռիսկ: Որպես այս ռիսկի չեզոքացման հնարավոր տարբերակներից, Վենետիկի հանձնաժողովը առաջարկել էր Կարգապահական հարցերի հանձնաժողովում ունենալ հանձնաժողովի կազմի բալանսավորված մոտեցում՝ դատավոր և ոչ դատավոր անդամների ներգրավվածության մասով:

Հետևապես, ինչպես նախկինում, այժմ էլ **գտնում ենք**, որ կարգապահական հանձնաժողովի արդյունավետ գործունեության համար կարևոր է ունենալ հանձնաժողովի բալանսավորված կազմ և ապահովել դատավոր և ոչ դատավոր անդամների հավասարությունը, ինչպես օրինակ՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամների դեպքում է. 5 դատավոր և 5 ոչ դատավոր անդամներ: Ուստիև **առաջարկում ենք**, Հանձնաժողովի անդամների թիվը դարձնել 10, որից 5-ը կլինեն դատավոր, իսկ մյուս 5-ը ոչ դատավոր անդամներ:

Այս առաջարկը չընդունելու դեպքում, **առաջարկում ենք** վերանայել Հանձնաժողովում որոշումների կայացման քվոտան, մասնավորապես՝ նախատեսել, որ Հանձնաժողովի որոշումները, օրինակ՝ վարույթ հարուցելու կամ մերժելու որոշումը կամ միջնորդությունը ԲԴԽ ներկայացնելու վերաբերյալ որոշումը համարվում են ընդունված, եթե դրանց օգտին քվեարկել է ոչ դատավոր անդամներից հինգից չորսը:

[2] ԵԽ Վենետիկի հանձնաժողովի կարծիք թիվ CDL-AD(2017)019, կետ 135, https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e